


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓԻԱՐ**

Նամակ կամ որ եւ քրուքիւն  
պէսք Ե ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԲԱԳՐԻ  
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS  
Bazar Mourour, CAIRE Egypte



**Լ Ր Ա Գ Ի Ր**

**ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Եգիպտոսի համար տրեկն. ողջ դն. 80  
» » վեցամսեայ » 50  
Օսար երկիրներ տարեկան ֆրանկ 25  
» » վեցամսեայ » 14  
Թղթասարի ծախքը խմբագրու-  
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղուած նա-  
մակ կամ այլ քրուքիւն եւ չի տրուիր:

### ԷԹՆԻՔԻ ԷԹԵՐԻԱ

Այս անունը որ պատերազմէն առաջ քիչ  
անգամ կարտասանուէր Յունաստանէ դուրս  
եւ անծանօթ էր շատերու, հիմակ եւրոպական  
մամուլին մէջ անընդհատ կը յեղյոյզուի ու  
աշխարհի ամեն կողմը ուշադրութեան առար-  
կայ դարձած է: Պաշտօնական ու պահպա-  
նողական թերթեր կը դատեն կը դատափե-  
տեն Աթենքի այս յեղափոխական ընկերու-  
թիւնը՝ իբրեւ սկզբնապատճառ երկրին բոլոր  
աղէտներուն եւ հանրային կարծիքը՝ այս հո-  
սանքէն մղուած՝ զայրոյթ կ'արտայայտէ. մին-  
չեւ իսկ ըսուեցաւ թէ անոր վարիչներուն դէմ  
դատ պիտի բացուի:

Պօլսոյ լրագրիւններն անգամ որոնց այդքան  
տարիէ ի վեր արգիւրուած էր «յեղափոխու-  
թիւն» բառն արտասանել, — ուրիշ չա՛տ մը  
բառերու եւ բացատրութիւններու հետ որոնք  
հատոր մը պիտի կրնային կազմել — հիմա  
լիաբուռն կը գործածեն զայն, իրենք ալ ի-  
րենց պզտիկ հարուածը տալու համար խեղճ  
էթնիքի էթէրիան:

Իրա՞ւ, այսքան մեղաւոր էր այդ մարմի-  
նը. մենք յաւակնութիւն չունինք ասանկ փա-  
փուկ խնդիր մը քննել փորձելու, մանաւանդ որ  
մեզի համար օտար է այն. բայց իբրեւ միջազ-  
գային արգի կացութեան հետ ուղղակի առնու-  
նութիւն ունեցող հարց մը, անյիշատակ չենք  
կրնար թողուլ: Էթնիքի էթէրիան փայփայուե-  
ցաւ, պաշտպանուեցաւ, ընդհանուր խանդա-  
վառութիւն առաջ բերաւ յոյներուն մէջ, որքան  
ատեն որ յոյսեր կը ներշնչէր ու ազգային երազ-  
ներ կ'որոտէր. լըսը մարդիկ անոր հետ էին,  
զինուորականութիւնը սերտ կապեր ունէր անոր  
հետ եւ օտար երկիրներու հեղինակութիւններն  
իրենց համակրանքը կը նուիրէին նպաստներով.  
Կրետէի փրկութիւնը անկից սպասող հայրե-  
նասէրներ փոքր թիւ մը չէին կազմեր: Եւ  
ահա՛, տխուր ճակատագրով մը որ յոյներուն  
միայն չի վիճակուիր, եւրոպական քաղաքա-  
կանութիւնը ու «զինուց բաղդ» — ինչպէս  
կըսէին հինքը — Յունաստանի դէմ դարձան:  
Քաջարի մաքառումէ մը ետք՝ ահռելի պար-  
տութիւն մը կրեցին հեղինակները. ընկճուեցան,  
քայքայուեցան ու մեծագոյն կործանումէ մը  
ազատելու համար՝ յուսահատական ու պա-  
ղատագին դիմումներ ըրին. ժողովուրդը՝ այս  
մահացու հարուածին առջեւ, որ կը վիրա-

ւորէր ո՛չ միայն իր ազգային արժանապատ-  
ւութիւնը եւ կը քանդէր իր դիւցազնութեան  
ջրէրու պատմական յիշատակները, այլեւ  
սուգի ու ահագին կորուստներու կը մատնէր  
զինքը, չէր գիտեր որո՞ւ վրայ թափել իր  
բարկութիւնը. էթնիքի էթէրիան պատրաստ  
զո՛հ մըն էր ու եղաւ նոխազ քաւութեան:  
Բայց եթէ եւրոպական զինանազիտու-  
թիւնն այլապէս տնօրինէր եւ Յունաստան  
յաղթող ելլէր պատերազմէն, այս թշնաման-  
քի գոնէ կիսուն չափ համակրանք պիտի գտնէ՞ր  
այդ յեղափոխական ընկերութիւնը ու դափ-  
նիներով պիտի պսակէի՞ն զայն:

Այս հարցումը կրնեն եւրոպայի քանի մը  
ազատախոհ ու անկախ թերթեր, որոնց մէջ  
նաեւ ժողովաւոր սը ժընէվ որ կը հրատարա-  
կէ՝ էթնիքի էթէրիան գործունէութեան  
գիտակ Աթենքի մը պաշտպանողականը:  
Նամակագրին խօսքով, Բոյոյիսին ու Էթնիք-  
իսին չահը կը պահանջէր որ հանրային զայ-  
րոյթը հեռացունէին Պ. Տէլեանիսի եւ արքու-  
նիքը շրջապատող անձերուն վրայէն, որոնցմէ  
համար պիտի պահանջուի յառաջիկային, եւ  
ուրիշ մարմնի մը վրայ կեդրոնացունէին: Ու  
յաջողեցան այսպէս ընելու: Ընկերութիւնը  
ծայրայեղ ազգասիրութենէ մղուած, կրնայ  
սխալներ գործած, անհեռատես գըտնուած  
ըլլալ, կըսեն, չի գուշակած ըլլալ իրենց ան-  
նպատակ պարագաներու միաւորումը եւ մեծ  
տէրութիւններուն միաբանութիւնը Յունաստա-  
նի դէմ, բայց իր ծրագիրը էապէս հայրենա-  
սիրական էր ու իր վարիչներուն զգացումները  
ո՛ր եւ է կասկածանքէ վեր: Հիմակ ժամանա-  
կը չէ հրապարակաւ բացատրութիւն տալու,  
բայց իմացուցեր է հեղինակաւորութեան  
թէ պատրաստ է իր արարքը քննութեան են-  
թարկել յանձնաժողովի մը առջեւ որուն ան-  
դամակցին նաեւ նախարարներ:

Էթնիքի էթէրիային դէմ այնքան բան  
լսեցինք ու կարգացինք, որ կ'արժէր իմա-  
նալ նաեւ անոր պաշտպանութեան նուիրուած  
քանի մը խօսք: Վէճը հետաքրքրական է մէ-  
կէ աւելի տեսակետներով, ու չեղզը դատաս-  
տանի մը արդիւնքը իր շինիչ ազդեցութիւնը  
կրնայ ունենալ հանրային կարծիքին վրայ,  
նոյն իսկ Յունաստանէ դուրս:

### ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

— Չըզայն Եւ Խպսիւնեռուն կ'երթանք:

Վերջին քառք եւ առաջին սպառնալիքն  
է այս գոր կարստասնեն Լոռաձին մանկան  
ծնողը, մեռելին պարագաները եւ պսակ-  
ուելիք ամուրը, երբ իրենց առջեւ կը դրուի  
եկեղեցական Լոռահաստաս տակազինը:

Կրօնի այս բռի-Քիւր ժողովուրդը  
խրջեցնելու հանգամանք ունի որուն վրայ  
շատ ու շատ մեծելու է:

Մեր եկեղեցին Մասաւ Բրքոյի խա-  
նութիւն Լոռանէն չէ որուն յաճախորդները  
կ'առնեն կը փախն առարկելով քէ Սիւնա-  
ուին աւելի աժան կը ծախեն կոր այս ինչ  
կամ այնքան ապրանք:

Եւ զգեղ չէ՞ք գտնել — խոստովանեցէ՛ք —  
չաթը չաթը բազարը խի այդ դրութիւնը որ  
այնքան կը պզտիկցնէ կրօնի մեծութիւնը:

Եւ կը վախճաւ որ եկեղեցական աղա-  
ները շատ աղէկ քան մը ըրած ըրալու գո-  
հունակութիւններն վրայ պիտի տան ինչ  
արդիւնքի մը առջեւ:

Եկեղեցւոյ պիտանէն քեղմնաւորել ու-  
գողները, գիտե՛մ, անձնուրաց աշխատութիւն  
մը Լոռիեցին այդ խորհրդաւոր սակացոյց-  
ները յղանալու համար, տակալն մաղթելու  
է որ միայն պատէ ի վար կախուած մնալու  
չի դասապարտութիւն անոնք եւ ինչի չի տան  
գայրակոյրութիւններու գորս փնտնելու համար  
յաւակալէն ծնած արարածներ կան Դահի-  
րէի մէջ:

Եթէ մեզի ներքին ըրալ, պիտի առա-  
ջարկէիք ազգ. վարչութեան՝ այդ տակազի-  
ները պահելով հանդերձ անոնց մէջ մեզնեւ  
աւսիճանաւորման դրութիւն մը, ինչպէս տ-  
վոր եւ ընել ի Պոլիս:

Տրամաբանօրէն մեծելով, ի՞նչպէս  
կոզգէք որ Լիւսնոսի մը համար 480 դրոյ  
վճարէ ամիսը տար քսի վասկող պաշ-  
տօնեայ մը, ինչպէս Լաւա հազար եւ հա-  
զար ժեշտաններ ունեցող հողատէր:

Եթէ չենք սխալիր, Պոլսոյ Պատրիարխա-  
րանք տան եւ մեկ աստիճան դրած է Լիւ-  
սնոսի տնօրին վրայ. ինչո՞ւ անոր պէս  
ընել:

Տարակոյս չունիք որ Պեն-Ել-Սուրենի  
conseiller financierները, ամենօրեայ օրի-  
նակներէ օգտուելով այս տեսակ քաւելո-



խոսքիս ներմուծել պիտի ուզեն նորոգ հաստատեալ քաղաքներուն մէջ :

Ասոր եւ անոր տաճ խորհուրդները մեր մեծ աղաներուն համայնագիտութիւնը վերադարձնելու, ընդհանրապէս քաղաքացիական ակաւնը մը դնելու եւ անոնք ամեն անոնց որոնք իրենց եկեղեցիին քաղաքական մը յախ եւ քերտու ինչ մը աւելի կը սիրեն :

Հակառակ պարագային, գուցէ բարոյապէս շատ տաճեմ մեր կրօնք ու կղերք. նոյն իսկ պնդողներ կան թէ այս վերջինները արդէն նիւթապէս տուեալու սկսած են : Գալով ժողովրդեան՝ մեծ պիտի խրատենք նախ իրեն հայ եւ ապա իրեն հրապարակագիր, այդ խաչի, կաթոլիկի դիմելու ապաւնալիք միանգամ ընդ միշտ վերցնել մէջեղեմ, որովհետեւ սահակներու, դասակարգութեան յատկէ քանի մը դրոշմի համար արքայութիւններու եւ յետինը վատաբանեցնելու ցածր եւ ամենեւնի անբարոյական մէջեղեմ դնել :

Բողոքել, վիճաբանել, խնդրել կը հասկընանք, բայց կրօնափոխութեան նոյն իսկ միայն ապաւնալիք՝ ճշմարիտ հայուն արձանի չէ եւ միայն անգամ ամօք կը քերտ ամեն անոր որ ինքզինքն կը յարգէ :

\* \* \*

Այս շաբթու երեսասարդ մը եւ օրիորդ մը որ ամուսնանալ կ'ուզեն, յայտարարած են թէ գնեալ տարեան պատճառաւ խրաչի պատկ պիտի ըլլան :

Զարմանալի է ասիկայ :

Մեզի համար ամուսնացող մը եթէ կը փնտռէ . . . զիրկ մը որուն մէջ հաճելի ըլլայ նետուի, այն աչ այս ինչ կամ այն ինչ եկեղեցիներ ըլլալու չէ :

## ԴԵՊԻ ՊՕԼԻՍ

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ Պ. Վ. Բ.

Ա.

Պ. Վ. Բ. կը պնդէ որ գաղթական հայերու անյաջողութիւնը լոկ տեղական անհրապարտ պայմաններու վերագրելի է եւ ոչ երբեք իրենց ապիկարութեան ու ծուլութեան : Եւ ասիկա ապացուցանելու համար օրինակներ մէջ կը բերէ Երկնային կայսրութեան բնակիչներէն :

Ինչպէս կ'երեւայ, Պ. Վ. Բ. մօտէն ուսումնասիրած ըլլալու չէ մեր գաղթականներու գործերը, ապա թէ ոչ աւելի աղէկ պիտի ըմբռնէր մեր յօդուածին բուն ոգին եւ իրաւունք պիտի տար մեզի : Յարգելի յօդուածագիրը կը թուի կարծել որ մենք Եգիպտոսի գաղթականներուն անյաջողութիւնը հեռուէն հեռու տեսնելով՝ եկեր յանգեր ենք սա՛ եղբայրացութեան թէ հայերը ծոյլեր ու ապիկարներ են : Եթէ այսպէս եղած ըլլար մեր ընթացքը՝ այն ատեն Պ. Վ. Բ. իրաւունք կ'ունենար արդարեւ Քաղաքական Տնտեսագիտութեան քաղաքական ընկեր : Դժբաղդաբար իրողութիւնը ասկէ տարբեր է :

Մեր նախորդ յօդուածը գրած ժամանակ, մեր աչքին առջեւ ունէինք ութ ամսուան փորձառութեան հարիւրաւոր օրինակ-

ներ, բայց թերթին ծաւալը թոյլ չէր տար մեզի մանրամասնութեանց մէջ մտնել : Պ. Վ. Բ. իր յօդուածով կը հարկադրէ զմեզ աւելի պարզ խօսիլ այս անգամ :

Երբ գաղթականներու տարափը սկսաւ տեղաւ Եգիպտոս, հայ թէ օտարազգի՝ կարեկցութեան ու համակրութեան զգացումէ մզուած, իրենց կրօնաւոր ըրին անոնց գործ հայթայթելու, ոչ թէ ֆէլահի աւուրչեցով՝ այլ աշխատութեան այնպիսի վարձքով մը, որով կարող էին համեստօրէն ապրիլ նոյն իսկ «զարգացած Զուիցերիացիներ» : Բայց ի՞նչ եղաւ արդիւնքը : Գործի գացողներուն հարիւրիւն եօթանասունը քանի մը շաբաթ յետոյ ետ դարձան ողորմելի պատճառաւ աղանութիւններով : Մին կ'ըսէր թէ աշխատութիւնը ծանր է. ուրիշ մը՝ թէ Էֆէնտին պէտք եղած քաղցրութեամբ իրեն հետ չի խօսիր եւ այլն : Հարկաւոր օրինակներու մէջէն յիշենք միայն երկուքը : Պոլսեցի հայասէր յոյն մը քաղաքի մէջ գործատեղի մը ունի ուր կը շինէ եւրոպական նրբաճաշակ զամբիւղներ : այդ յոյնը փափագ յայտնեց իր գործատեղին աշխատողներէ 30—40 երկու սեռէ հայ գաղթականներ որոնց թէ արհեստ պիտի սորվեցնէր եւ թէ իւրաքանչիւրին պիտի վճարէր մէկ ֆրանք օրական : իսկ արհեստը սորվելէ յետոյ ամէն մէկը պիտի ստանար օրը 4—5 ֆրանք : Առաջին անգամ զրկուեցան 10—12 գործաւորներ ու գործաւորութիւնը որոնց թիւը հետագայէն պիտի աւելնար : Հազիւ երկու շաբաթ աշխատած էին եւ ահա՛ օրին մէկը ամենքը մէկանց գործադուլ ըրին աւարկելով թէ իրենց արժանիքը մէկ ֆրանքէն աւելի էր : պէտք է նկատել որ ասոնցմէ ոչ մէկը տան վարձք ունէր, Գաղթ. Յանձնաժողովը պատրաստած էր զիրենք եկեղեցապատկան չէնք բերու կամ յատկապէս վարձուած բնակարաններու մէջ : Բայց անոնք նախամեծար համարեցին օրական օրա մը չոր հայ ստանալ եւ Բուսոյթին աղքատանոցը պնակ մը ապուր խմել քան թէ յոյնի գործարանը մէկ ֆրանքի աշխատիլ ու մի եւ նոյն ատեն արհեստ սորվիլ :

Ուրիշ օրինակ. — Բաւժէ տալու հայասէր տնօրէնը փափագ յայտնած էր հայ գաղթականներէն երկու սպասաւոր աշխատողներ որոնց ամէն մէկուն պիտի վճարէր ինկզ մասնաւորապէս ուսկի ամաթոյակ : խոստովանեցէք որ շատ մը գրագիրներ ասկէց աւելին չեն շահիր, մանաւանդ հայ վաճառականներու քով : Երկու առողջ երիտասարդներ զրկուեցան այս պաշտօնին : Հազիւ շաբաթ մը անցեր էր ու մեր կտրիճները ետ դարձան, առարկելով թէ աշխատութեանը չեն կրցեր դիմանալ : նոյն սրճարանին մէջ 50—55 տարեկան յոյն սպասաւորներ կան ու կը գիմանան . . .

Ի՞նչ անուն տալ պէտք է այս երեւոյթին : Գանք հիմայ ձեռներէցութեան ոգիի պակասութեան : Ասոր ճշմարտութեան համոզուելու համար բաւական է որ ամէն ընթերցող իր փորձառութեան դիմէ : Ընկերին օգնութեան արժէքը ըմբռնողներէն ենք, բայց ամէն բանի համար ընկերին օգնութեան դիմելը ինքնուրոյն ձեռներէցութեան պակասութիւն կ'ենթադրէ : Մարդիկ գտնուեցան, — եւ

ասոնք փոքր թիւ մը չեն կազմեր — որ ըսին «Գործ գտէք մեզի որ աշխատինք» եւ իրենց անվիճելի աշխատասիրութեան ապացոյցը այս կերպով տալէ յետոյ, խղճներին հանդարտած, գային օրերով ամիսներով փակուիլ իրենց խրճիթներուն մէջ, սպասելով որ ուրիշ մը իրենց համար գործ հայթայթէ : Ի՞նչ կրնային ընել, պիտի առարկուի : Զեռներէց մարդը, ճարպիկ մարդը իր ընկերքը ոչ ձեզի կը հարցնէ ոչ ալ ինծի : փողոց կը նետուի, քաղաքին ամէն անկիւնը ման կուգայ, իրերը գործերը կը հետապօտէ եւ իր սրտեւտութիւնը «հաց» կը գտնէ հոն որ մարդի գանդաղութիւն ունեցողին համար անապատ մըն է լոկ :

Աղքատագիրս

Լ. Մ.

## ԿԵԱՆՔԻ ԶԵՐՏ ՄԸ

ՎԵՐԱԴՈՐ ՓԱՌՔԸ

Այդ առտու երկաթուղիով կուգար Տեղապահ Պատրիարքարան կամ աւելի լաւ՝ Տեղապահ Սրբազան Հայրը, եթէ հոյ բարի քրիստոնեայ էր :

Տեսարանը Գուռ-Գարուի կոյարանն է : Սիրբէճի կառավարմանը կը հասնի : Անցորդներու սովորական խոնուած կայարանին առջեւ. Սրբազանը կը հազնի . . . իր ծանրադէմ, խստակրօն կերպարանքը, Տեղապահի պաշտօնական դիմակը դրած է նոյն հետայն :

Երկաթուղոյ պաշտօնեայ մը կը բանայ առաջին վախօնի մը դուռը որուն առջեւ արդէն կանգնած կ'սպասէ բարապանը փութ կոտորութեամբ մը ուր ձանձրոյթը կը մատնուի սակայն : Հաստ ու ճարպոտ մարմնով մը վրայ, կառքին գոնէն դուռ կը ցցուի ահա գլուխ մը, գունտ, պարա՛րտ, — կատարեալ հոլանտական խոյո՛ր գլուխ մը պանիր, — որուն վրայ աչքերը տարորոշ, անգոյն նայուածք մը ունին : Թանձր անթափանց ակնարկ մը ուր կեանքը թռած է . . . արծաթ կոթէ գաւազանին վրայ յենով ու քղանցքը իր տգեղ մազուտ ձեռքին մէջ վեր ժողված՝ կիջնայ վար, ուր իր հետը՝ իր . . . ՓՈՐԸ : Մտեղէն կիսագունդ մըն է այդ փորը, Սրբազանին դուռէ միակ հակցած «Աշխարհ ամենայն»ը, որուն վրայ անցած դարձած է հանապազ իր պարարակ գոյութիւնը, ինչպէս կանցնի մեր մահկանացու կեանքը այս հողագին վրայ :

Ա՛հ, Սրբազան, եթէ մարդուս անձնական արժանիքը իր բաշած խանքարին, իր կշռած քանակութեանը վրայ գնահատուէր . . . կաթողիկոս կ'ըլլայիք :

— Թեւէս չը պոնե՞ս, ծօ՛ . . . պոռայ յանկարծ Տեղապահը բարապանին երեսն ի վեր, նոյն ժամայն յանդիմանական փզբոռով ակնարկ մը ժայթքեցնելով փոքրաւորին, — իր տեսակ մը հոգեւոր յաւելուածը, — զոր ամեն տեղ իր բայերուն կը կցէ սնրութան : Անգղամե՛րը, երբէր չը պիտի գիտնան զինքը պատշաճ օղջանանով մը շրջապատել : Երբեք . . .

Բարապանը ճամբայ կը բանայ, բիթը իր ետ, սախնի թաւ պեխերուն վրայ կախած, դէմը թըթուած, է՛հ, ինչպէ՛ս ալ չը կատարի խեղճ մարդը : զեռ երէկ իսկ՝ ազգականէ մը իրեն նուէր զրկուած պտուկ մը մածունը գրուած է Սրբազանը եւ ուղղակի տուն խաւած, «խաթիթայի եօղուրը մէքին կ'ըլլայ» : Հատուց է չէ՛ կերեր, եւ հիմայ, իր այս ձրի ու գոհիկ կշտամբանքը իր շնորհակալքին է :

Փողոց մտած են : Տեղապահ հայրը ֆէֆշալով կը հետեւի բաղադրուի բարապանին, անվիճապէս ետին, մէկ քովը ձգելով իր փաթեղը, վարդապետի մը նախագիծ, «ընդ մամուլ» վտրդապետ մը, սեւուլիկ, պտիկ, խալիկ որ շատ լաւ կը կրէ, կը վայելցնէ փոքրաւորի իր մանրադիտական տխրոյսը : Ամեն անգամ որ ճամբան «ազնուաշուք»ի մը հողդիտին պիտի տեսնէ որ, մեր փոքրաւորը, քա՛հ, ինքնաբերական արագ շարժումով մը ձախ ձեռքը պիտի նետէ իր ծաղրանկարի այլանդակ հովանոցը եւ բուրվաթի ձեռով քծնի իսրեւ մը պիտի կտրէ օգին մէջ : Միմոսի ստրկական լարեւ, զոր



անգամ մըն ալ խաթեր համար պահուած և աշակերտներուն քեփսիէն գերակուր գողցալ կառավարիչներուն քով տեսած եմ միայն :

Պատրիարքարան տանող փողոցներուն մէջ, հոս ու հոն հանդիպուած հեզ ու պարկեշտիկ անցորդներ որոց երջանիկ պարզամտութիւնը չը պիտի թոթվէ երբեք գաւազանի մը արծաթին ու բարապանի մը կոճակներուն ոսկւոյն շրջումը, հին բարի թաղեցիներ որոց բարեպաշտութիւնը անխախտ պիտի պահէ յաւիտ սքեմին ու փակեղին երկիւղած յարգանքը՝ «նուաստ ծառայ»ի հլու բարեւ մը կը խոնարհեն Տեղապահ հօր, որ տակաւ, իր թուն, չին տակ խորխորանքի ուրիշ նոր թունը մը կը շինէ, երկրորդ յարկ մը, ուռած, վերած, յղիւցած :

Բայց Պատրիարքարանի բուն փողոցն ենք հիմակ նեղուկ, հնորեայ անցք մը այդ փողոցը ուր անցորդները, գրեթէ անվրէպ, գործով մը Պատրիարքարան կերթան կամ անկից կը վերադառնան : Տեղապահ Սրբազանը ա՛լ բոլորովին իր սիրական տարրին մէջն է այստեղ . պատուական, գերազանց դաշտ իր փառամուտ տենջանքներուն ժշակման համար : Կուրծքը յոխորտանքի մը մէջ ցցած, աւելի ուժգին կրթներով իր գաւազանին և մատ մը աւելի ուռցած իր երկրորդ թունը՝ կը յառաջանայ, և ճամբուն երկայնքը բոլոր անցորդները դէպի պատերը կը քաշուին, ալիքներու նման որ եզերքներուն կ'երթան բաղիւլ, երբ նեղուցէ մը յանկարծ նաւ մը ճեղքէ անցնի . . .

Եւ ահա քանի մը տասնեակ քայլ հեռու են, Սրբազանին աչքերը, որ բան չեն գիտեր տեսնել, կը տեսնեն մէկը որ Պատրիարքարանին դրան մօտիկ կ'ընթացէ՝ ոտքի ելնելու ո՛չ իսկ շարժում մը կը գծէ . ան սարքեր ու անկարեկիւր՝ կը Ժայռ հի չը տեսնէ . . . կիսագունտը մտնէ որ կը քալէ . . . երկու ոտքի վրայ :

Օ՛հ, ամպարիշտը, օ՛հ, սրբապիղծը . . .

Բայց անհանգուրծելի, աններելի, անբաւելի է ասիկայ և Սրբազանը որուն գայթակղումը ա՛լ չափ չունի՝ բարկաճայթ .

— Օտքի չը հանե՞ս, ծօ՛, էջու կտոր . . .

Բարապանը բռնէ շարժումով մը, ուր յափշտակուած մածունին ռիւք ուրիշ մը առնելու պէտքը կայ կարծես, կը խոյանայ հէգ մարդուն վրայ և թեւը տեղէն հանելու ուժգնութեամբ թոթվելով դայն .

— Էկողը վո՞վ է, չե՞ս տեսնաւ կոր, քեփսի յեսիգ . . .

Մարդուկը, թէեւ չարաչար, անողոր կերպով ցնցուած, բայց միշտ նստուկ՝ դանդաղ շարժումով մը իր գլուխը կ'որորէ վզին կոճղին վրայ և իր շուրջ կը պտտնէ տարտամ, անխառն, սառած նայուածք մը որ նայուածք մը չէ :

Բարապանը ետ կ'ընկրկի մէկանց, ու Նարին սրբազնութեան դառնալով .

— Պախար քեզ է եղե՞ր, Սրբազան . . .

ԱՆՅՈՐԴ

## ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Առաջնորդական Տեղապահ Հայրը կիրակի առաւօտ իւր քարոզին մեծագոյն մասը նուիրեց որբերու խնդրին և ազդու հրաւեր մը ուղղեց Եգիպտոսի հայ ժողովրդեան՝ իրենց օգնութեան ու նպաստի բաժինը չի զլանալ այդ տարաբաղդ մանուկներուն :

Այս ազգային-մարդասիրական պէտքին գործնական ձեւ մը տալու իրեն միջոց, կառավարկենք Տիկնանց երկու մասնախումբեր կազմել Գահիրէի ու Աղեքսանդրիոյ մէջ, հանգանակութիւն կատարելու և արդիւնքը Պատրիարքարան հասցունելու համար :

Կ. Պօլսէն Թանի ուղղուած թղթակցութիւն մը սովի երկիւղներ կը յայտնէ Բաղէ-չի գաւառին համար : «Քիւրտերը իւրացուցած ըլլալով, կըսէ, հայաբնակ գիւղերու երկրագործութեան յատուկ անասունները,

աշունն անցաւ առանց վարուցանի : Տեղական իշխանութիւնը, որպէս միշտ, ուշ անդրադարձաւ ընդհանուրին համար անխուսափելի եղող այս վտանգին և մայիսի սկիզբը միայն սկսաւ մտածել թէ ի՞նչ կրնայ ընել : Առաջարկուեցաւ նահանգային ժողովին՝ հրաւիրել Քիւրտերը իրենց եղները հայերուն փոխ տալ, պայմանաւ որ հունձքերուն կէսը անոնց թողուի : Որովհետեւ ցորենի ու գարիի վարուցանի եղանակն անցած է, կը մնայ միայն կորեկը զոր դրացի գաւառներէն բերել տալ կը խորհուի » :

Եթէ խեղճ հայ երկրագործն իր փրկութիւնը Քիւրտերու հաճոյակատարութենէն պիտի սպասէ, աւելորդ է ըսել թէ մեծ յոյս մը չի կրնար ունենալ : Թանի թղթակիցը տխրագուշակ է յառաջիկայ ձմրան հունձքերուն համար և երկիւղ կը յայտնէ որ 1879—1880ի սովը չի տիրէ՝ հազարաւոր անձեր անօթութեան մատնելով :

### Մշակի մէջ կը կարգանք .

Մի մասնաւոր նամակից իմանում ենք, որ Թէհրանում, մայիսի 5ին կայացել է մի շքեղ թատրոնական ներկայացում՝ հայոց Հայկազեան դպրոցի օգտին, պարսից արտաքին գործերի մինիստր Միւշի-ու-Դօվէի հովանաւորութեան և նախագահութեան ներքոյ : Մուշաֆէրէ էդդին Շահը, որին կարգադիր յանձնաժողովը պատու էր ունեցել դիմել, նուիրել է 250 թուման փող : Զուտ արդիւնք մնացել է 2000 թուման : Պարսից կառավարութեան և մանաւանդ Վեհ Շահի այդ սիրալիր վերաբերմունքը դէպի Պարսկաստանի հայերը լաւ ապացոյց են, թէ հանգուցեալ Նաւրէզդին Շահի քաղաքականութիւնը հայերի վերաբերմամբ որ և է փափայլութիւն չէ կրել :

— Մեզ հաղորդում են հաստատ ազդրւրից, որ պարսից Շահի կողմից մի արտակարգ դեսպանութիւն է գնում Լոնդոն, Վիկտորիա թագուհու թագադրութեան 60ամեայ յորելեանին մասնակցելու համար : Այդ արտակարգ դեսպանութեան առաջին բարտուղար է նշանակված Յովհաննէս խան Մանեհեան որ յայտնի է մեր գրական աշխարհին Շէքսպիրի պիէսաների հայերէն թարգմանութեամբ : Յովհաննէս խան Մանեհեանը ներկայումս Թէհրանի արտաքին գործերի մինիստրութեան պաշտօնէն է և Շահի թարգման :

### ՆՇԱՆԱԿԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս կիրակի օր տեղի ունեցաւ, Նուպար բուշայի Տայրային վերակցու Ստեփանէ Զ. Իրէքճեանի տան մէջ, ընտրեալ բազմութեան մը ներկայութեամբ, իւր աղջկան՝ Օր. Հայկանոյի նշանախօսութիւնը Լեւոնէ Զ. Կիւմիւշեանի հետ, Կ. Պօլսեցի ծանօթ ոսկերչի մը որդին որ սուեւտրական գործով հաստատուած է քաղաքիս մէջ :

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի առաւօտ Բարիզէն յաջորդաբար հասած հեռագրեր ծանուցին թէ ֆրանսական Հանրապետութեան նախագահ Պ. Ֆէլլքս Ֆոռի վրայ սպանութեան փորձ մը եղեր է Լուշանի ձիարշաւի միջոցին : Նախագահին անցած ճամբուն վրայ, մայրաքաղաքին մէջ, ուռմը մը պայթեր է . միւնիոյն ատեն, մարդ մը ըմբոստելի հարուած մը պարպեր է, երկուքն ալ առանց ո՛ր և է վնաս պատճառելու : Մարդը ձեռքակալուեր է . խենդ է կ'ըսեն : Ամեն կողմէ խնդակցական արտայայտութիւններ եղան Առ Պ. Ֆէլլքս Ֆոռ, այս փորձանքէն ազատած ըլլալուն համար : Արկածի վայրէն երկրորդ ուռմը մըն ալ գըտնուեր է, շատ վտանգաւոր տեսակէն :

— Թուրքիոյ և Յունաստանի միջեւ հաշ-

տութեան կնքման համար կատարուած բանակցութիւնները նոր քայլ մը չափին շարժուս սկիզբէն ի վեր և թէեւ կրկնուեցաւ թէ Բ. Դուռը հաշտարար տրամադրութիւններ կը ցուցունէ, սակայն երէկ դիշեր Լոնտոնէն հասած Ռիւդէրի հեռագիր մը մտահոգութիւն պատճառելու ընդթիւն ունի : Աւասիկ այդ հեռագիր. — «Թայմզ կիմանայ Հանեյէն, թէ ընդհանուր շփոթութիւն կը տիրէ Կրէսէի մէջ » :

— Կարկաթայի մէջ, երկուշաբթի օրը, զօրաւոր ցնցում մը պատահելով, մարդու կուրստ և նիւթական մեծամեծ վնասներ պատճառեւ է : Գնցումը զգացուեր է Հնդկաստանի ամբողջ հիւսիսային մասին մէջ :

### Ժ Ա Ն Տ Ա Խ Տ

Ճիստէնէն առնուած լուրեր՝ օրական երկու երեք դէպք կը ծանուցանեն : Ժանտախտին երեւան ելլելէն ի վեր, 27 հոգի մեռած է : Առողջապահական բժիշկներ ու պաշտօնեայներ զրկուեցան Էլ-Թօր մաքրանոցն և ըզգուշական միջոցներ ձեռք կ'առնուին : Կ. Պօլսէն ալ բժշկական պատուիրակութիւն մը զրկուած է :

### “ԷԼ-ՄՈՒՇԻՐ”Ի ԴԱՏԸ

Արաբերէն Էլ-Մուշիր լրագրոյ տնօրէն-խմբագիր Պ. Սարգիսի դէմ բացուած ծանօթ դատը չափով օր տեսնուեցաւ Գահիրէի պատժական ատենին առջեւ : Նախագահը ուղեց որ դատավարութիւնը դռնփակ կատարուի . բայց ամբաստանալի փաստաբանին պահանջմամբ՝ հաւանեցաւ հրատարակային ընելու, պայմանաւ որ ունկնդիրները լուռ և հանդարտ մնան : Ընդհանուր դատախազ Ա. Կու-է-Ազիդ էֆէնտի երկար ամբաստանագիր մը կարդալով, պահանջեց որ օրէնքին տրամադրած մեծագոյն պատիժը տնօրինուի Պ. Սարգիսի դէմ որուն վերադրուած յանցանքն է, ինչպէս կը յիշուի, Էնդրանիսիտանի ու Տիլի Գրոնիփի երկու յողուածներուն արտասպան իր թերթին մէջ : Հակառակ ամբաստանալի փաստաբանին ազդու և պերճախօս պաշտպանողականին, Էլ-Մուշիրի տնօրէն-խմբագիրը դատապարտուեցաւ մէկ տարուան բանտարկութեան և 20 ոսկի տուգանքի ինչպէս նաեւ դատական ծախսոց վճարման :

Պ. Սարգիս վերաքննութեան դիմած է :

\* \* \*

Եգիպտոսի եւրոպական մամուլը, մեծագոյն մասամբ, չափազանց կը գտնէ այս պատիժը ու կը բնաւադատէ տրուած վճիռը, յոյս յայտնելով որ վերաքննիչ ատենը պիտի բարեփոխէ զայն : Գահիրէի մէջ գտնուեցաւ սակայն Փրանսերէն թերթ մը Ժուրնալ Եփրսիէն, որ տեսակ մը գոհունակութեան արտայայտութեամբ հրատարակեց Էլ Մուշիրին դատապարտութիւնը, յիշեցնելով այս առթիւ թէ ինք ամիս առաջ ալ համանման պատիժներու ենթարկուած էին Էլ-Վազր և Էլ-Մուշիր թերթերը՝ Անգլիոյ թագուհոյն անձին դէմ անարգանք ու թշնամանք ըրած ըլլալուն համար և թէ Էլ-Մուշիրն ալ, որ Գերմանիայ կայսեր անձին դէմ նոյն ընթացքին մէջ գտնուած էր, չէր կրնար խուսափիլ նոյն պատիժէն :

Այս փաստարանութիւնը ու այս ենթադրական նմանութիւնը հիմնովին սխալ են և ընդգիծալիք թերթեր չա՛տ արդարացի կերպով ու լքօթէն հերքեցին զայն . Էլ-Վազր և Էլ-Մուշիրը մէկ երկու թիւ միայն հրատարակած էին, խայտառակ ծաղրանկարներով, մինչդեռ Էլ-Մուշիրը երեք տարիէ ի վեր կը հրատարակուի կանոնաւորապէս և իր արտասպան երկու յողուածները հին ու նոր աշխարհի մամուլին շրջանը կատարելէ ետքը միայն եկած հիւրընկալուած են այդ շարժաթղթերին մէջ :

Պ. Սարգիս դատապարտուեցաւ, որովհետեւ իր դէմ կատարի պայքար մը կար իր հակառակորդներուն կողմէ . պարզապէս կուսակցական նկատմաներու զոհ կերթայ : Գէթ այս է ընդհանուր տպաւորութիւնը :

### ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԿՆԵՐՈՒ

Սկսեալ յառաջիկայ Յունիս 18 Ուրբաթ օրէն, այսուհետեւ Խտիվական շոգենաները իրենց Բիրէի և Կ. Պօլսոյ կանոնաւոր ուղեգծին պիտի հետեւին :

Աղեքսանդրիա 15 Յունիս 1897

Le Gérant: HENRY SAKAKINI



| ԿԱՅԱՐԱՆՔ      |      | ԱՌԱՒՈՏ          | ԵՐԵԿՈՑ      | ԿԱՅԱՐԱՆՔ      |      | ԱՌԱՒՈՏ         | ԵՐԵԿՈՑ |
|---------------|------|-----------------|-------------|---------------|------|----------------|--------|
| Գահիրէ        | մեկ. | 11 40           | 7 —         | Սիւէշ (քարափ) | մեկ. | 9 50           | —      |
| Պէնհա )       | ժամ. | երեկոյ<br>12 28 | 7 48        | » կայարան     | »    | —              | 3 30   |
|               | մեկ. | 12 33           | 7 53        |               |      |                |        |
| Զակաղիկ }     | ժամ. | 1 34            | 8 54        | Իսմաիլիա      | »    | երեկոյ<br>1 20 | 7 5    |
|               | մեկ. | 1 44            | 9 4         | Զակաղիկ )     | ժամ. | 3 7            | 8 53   |
| Իսմաիլիա      | մեկ. | 3 40            | առտ.<br>1 — |               |      |                |        |
| Սիւէշ կայարան | ժամ. | —               | 5 —         | Պէնհա )       | ժամ. | 4 13           | 9 47   |
| Տօք (քարափ)   | ժամ. | 6 55            | —           |               |      |                |        |
|               |      |                 |             | Գահիրէ        | ժամ. | 5 5            | 10 35  |